

Հ. Ճ. ՍԻՐՈՒԽԻ

ՕՐՄԱՆՅԱՆ ԵՎ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԸ*

Բ. ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՇՈՑԻՆ ՄԵԶ

1. ՕՐՄԱՆՅԱՆ ՀԱՅ ԵՐԳԻԿԻ ՏԱԿ

Տասնվեց առաջին տարիները, զորս Օրմանյան անցուց Հայ Եկեղեցվո Հովանիին տակ, ամեննեն խանդավառ շրջանն են անոր կյանքին: Այդ տարիները ինքնին բավական եղան ապացուցանելու, թե իզուր չէր ոգևորությունը, որով ողջունված էր անոր դարձը Հայ Եկեղեցվո ծոցը: Էլլա Կարնո իր առաջնորդության ուժը տարիները, ըլլա միակ տարին էջմիածնի ճեմարանին մեջ, և Արմաշ անցուցած իր յոթը տարին, պիտի կրնային մինակնին արժեք տալ մարդու մը կյանքին: Այդ պաշտոններուն վրա Օրմանյան ապացուցն էր տվեր անխառն հայրենասիրության մը, և իր անսասան ուխտին՝ նոր սերունդ մը բերելու Հայ Եկեղեցվո և սպաս: Իր այդ բոլոր պաշտոններուն մեջ ալ ճակատագիրը ընդհանաց իր գործունեությունը, բայց երեք պաշտոններն ալ գիծը բացին: Կարնո իր տարիները զրգիռ եղան և ուրիշներու, որպեսզի գավառի սիրույն լրեն Վոսփորի գեղածիծաղ ափերը, իսկ ձեմարանին և Արմաշի մեջ ան կորիզ դրավ նոր Հոգևորականության:

Օրմանյան երր Հայ Եկեղեցվո ծոցը կուռար, ոչ իսկ քառասուն տարու կար, ծնած 1841 փետրվար 11-ին, մոտ 39 տարեկան էր ուրեմն, երր Ներսես պատրիարք անոր գլուխ կդներ հայկական վեղարք:

Տարիք մըն է, որ մարդ արդեն հասունցած կըլլա լրիվ, ճանշած կըլլա աշխարհի:

* Եարահակված տէջմիածն» ամսագրի 1961 թվականի Խ-ից:

շարն ու բարին, գտած կըլլա իր կյանքի ճամբան, Արդարկ, այդպես կներկայանա Օրմանյան Հայ Եկեղեցվո: Ան կներկայանա աշխատանքի մը բովեն արդեն անցած, հանրային կյանքի մեջ իր գիծը ճշտած, և Հայ Եկեղեցվո մասին արդեն որոշ համոզումներով, ոչ թե իրու արկածախնդիր մը, որ շապիկ կուպա փոխելու և ստանալու նոր կլիմային ձևն ու գումբը:

Օրմանյան Հայ Եկեղեցվո գիրկը կուռար իրեր կազմված հանրային մարդ, հետո բերելով երկու տասնյակ տարիներու իր փորձը:

Օրմանյան ամեն բանե առաջ իր հետ կրերեր գիտական հսկա պաշար: Ոչ ոք իրեն շափ հմտություն ամբարած էր իր մեջ, և ոչ ոք իրեն նման տեր կմնար իր սորվածներուն: Մեծագույն նպաստն էր, զոր կընդուներ Հայ Եկեղեցին այնպիսի պահումը, երբ վանքերուն մեջ ճրագը մարած էր վաղուց, ու դիպվածով կհասունային կարկառուն դեմքեր՝ առաջ վարելու համար նալիք:

Օրմանյանի հետ միասին կուգար նաև շատ բան իր ստացած դաստիարակութենեն: Այդ դաստիարակությունը, ինչպես տեսանք, ան առած էր բացառապես Վատիկանի հովանիին տակ: Իր կաթոլիկ կրթության շատ մը բիծերը թոթափած էր ան երր ոտք կկուխեր Հայ կյանքի սեմբը Բայց հետք կրերեր բաներ, որոնց պետք պիտի ունենար: Տքնելու կիրքը, պրատելու մոլուցքը, վերլուծելու

մեթոդը, և ասոնց հետ նաև սիստեմի և գիսիպինի վարժությունը, որոնք կաթոլիկ միաբանությանց ծուծը անցած են, հետք բերավ Օրմանյան, որպես անհրաժեշտ տարրեր իր նոր առաքելության համար ալ:

Արևմուտքի բարքերեն ևս շատ բան կրերեք Օրմանյան հետք, երբ աշխատելու կուգար հայ ժողովուրդի ծոցը:

Օրմանյան շատ բան թոթափած էր արդարեւ Արևելքեն. Թոթափած էր անոր առասպեկտական մեղքությունը, անփութությունը, դյուրագրգությունը:

Փոխարեն դարձած էր ավելի զուսպ և պաղարյուն, կենցաղագետ՝ կեղծավոր կարծելու աստիճան, և դիվանագետ՝ դիմացինը շվարեցնելու շափությունը:

Օրմանյան իր հետ կրերեք անշուշտ կաթոլիկ կղերը հատկանշող գիծեր ալ, գիծեր, զորս չի կրնար դյուրավ թոթափել մարդ որքան ալ ուզել Կաթոլիկ կղերը ունի արդարեւ իր ուրույն մտայնությունը: Ան մարմաջն ունի նախ հանդիսավորությանց և արտաքին ձևերուն, աշխարհիկ մարդու ձևերը կպահե ընկերության մեջ, հակաճառելու կիրքը բնազդական է դարձած իր մոտ, և համոզելու տեղուով միշտ բռնկած կմնա:

Օրմանյան այդ գիծերեն շատերը հետք առած կուգար:

Օրմանյան հետք կրերեք և լայն փորձառություն: Տասնյակ տարիներ ապրած Եվրոպայի կեղրոնք, ան լրիվ կճանշար Արևմուտքը իր բարքերուն և իր մտայնության մեջ, ան հավասարապես գիտեր, թե որո՞նք են Եվրոպայի լուսավոր գիծերը և արատները, գիտեր, թե ո՞րն է հսկական արժեք և ո՞րն է շպար, արեմայան քաղաքակրթության մեջ ո՞րն է իրականը և ո՞րն է կեղծը:

Երբ հայ կյանքին կուգար, Օրմանյան լրիվ գիտեր, թե ինչ կմտած Եվրոպան այս պատիկ ժողովուրդին մասին, որ աշքերն իրեն էր հառած աղերսագին, ինչ կարեն անոր ճառերն ու բանաձեւերը և երբեմն որքան թույն կա պահված անոր մեղրածորան բառերուն տակ:

Օրմանյան Հայ Եկեղեցին կուգար տիտղոսներով բռնավոր: Ան, ինչպես տեսանք, երիցս մագիստրոս էր՝ աստվածաբանության, փիլիսոփայության և եկեղեցական իրավաբանության, և անդամ էր Աստվածաբանական կաճառի: Տիտղոսներ են ասոնք, որոնք հազվագետ են հայ իրականության մեջ, և մինչև այն ատենավարագություն:

Մանավանդ այնպիսի պահու մը, երբ դեռ համալսարանի երես տեսած որևէ հոգևորա-

կան չունեինք, դյուրիին է երեակայել գուրգուրանքն ու ակնածանքը, որոնցմով շրջապատվեցավ Օրմանյան առաջին իսկ պահան: Եթե իրեն հանդեպ ցուց տրված այդ բացառիկ գուրգուրանքը Հայ Եկեղեցվո ծոցը զառնալու ժեստին համար էր, ակնածանքը կուղղվեր գիտնականին:

Բայց տիտղոսները ամեն բան չեն, ու սխալ պիտի ըլլար հետեաբար մարդը անոնցմով շափել:

Անոնք կատամեն շատ-շատ ճիզը, զոր թափած է մարդ մտավոր մակարդակի մը համենիու համար, և պտուղը, զոր հանրությունը կապաս իրման:

Ալլապես որքան ափառուսներ կան, որոնք շեցած են զիրենք կրողին հետ մեկտեղ, առանց գույզն բերք տալու:

Ու փոխարեն ինչ մեծություններ ճանշագավ հայ կյանքը, որոնք ափառուս յոմանին և սակայն կրցան գիտնականներ հանդիսանալ հայ գորությանց մեջ: Տիտղոս շոմեր Այտքնյան, ու ալ ունեցան Տաշլյանն ու Ալիշանը, որոնք սակայն կոթողական երկիր թողուցին հայ ուսմանց համար:

Օրմանյան, ինչպես պիտի տևանենք, արծեցուց հետագային իր տիտղոսները: Զանոնք գորոցի մեջ շպահնեց իրեն իր կենսագրության զարդ՝ փանալու համար անոնցմով ապագա մարդոց առջև: Ան իր տիտղոսները կրկին շահեցավ կյանքի մեջ, իր իսկ օրտինքով և իր պաղաքերությամբ:

Օրմանյան Հայ Եկեղեցվո գիրկը կուգար պահու մը, երբ տագնապի մեջ էր հայ կյանքը: Խրիմյան ու Նարպելի թեոլինեն նոր էին զարձներ ճեռուունայն: Մեծ հույսերուն հաջորդեր էր մեծ հուսախարությունը:

Եվ այդ պահում էր, որ Օրմանյան գործակցիլ կուգար Ներսիս պատրիարքին:

Այդ գործակցությունը կարճ տևած է իրականին մեջ, տարի մը՝ իր դարձնն հետո մինչև առաջնորդ երթալը կարին, և այն մեկուկես տարին՝ երբ Կարնո գեաբը զինք ստիպեց Պալիս գալ: Ներսիս իմապիս կարիք ուներ Օրմանյանի նման խորհրդականի մը, երբ թեոլինի ձախողանքին հնատ հայկական զատը նոր հուն մը մտնել պիտք էր, երբ «Ղալաթիս օշախը» անընդհատ կըզայնացներ զայն, երբ իր շաքարախտը կըարշարիք զայն գիշեր ու ցերեկ, և երբ բռնի կաթողիկոս կընտրեն զայն՝ լուրջի շառնելով անոր հիմանդրությունը, որ սակայն մահացու պիտի դառնար:

Օրմանյան հարևանցի միայն կըշափի իր գործակցությունը Վարժապետյանի հետ. «Օրմանյան Պատրիարքարանի մեջ ներսիսի

մոտ առանց պաշտոնական անոնքի հատուկ պաշտոնյա մըն էր, մասնավորապես եվրոպական դեսպանատանց հետ պաշտոնական անպաշտոն հարաբերությանց կողործածվեր, և կրնական ինդիքներու ալ կծառայեր, ինչպես երբ որ հարկ եղավ Անգլիական ինդիքներու ալ կծառայեր, ինչպես երբ որ հարկ եղավ Անգլիական

Եկեղեցվո կամբեթյան ժողովին պաշտոնական դրությանց և աստվածաբանական տեսությանց լատին լեզվով պատասխանել»³²։ Այնուամենայնիվ Ներսես Վարժապետյան թանկագին աշակից մը կունենար հանձին Օրմանյանի, իր ամենեն դժնդակ օրերուն։

2. «ՂԱԼԱԹԻՈ ԶՂԱԽԱ-Ը»-Ը

Իր դարձեն հազիվ Յ օր Հետո, 1879 Հոկտեմբերի 31-ին, Օրմանյան Ղալաթիո Ս. Լուսավորիչ Եկեղեցվո քարոզիչ անվանվեցավ, նոյեմբերի 4-ին խոսեցավ իր առաջին քարոզության հետո ալ մատուց իր անդրանիկ պատարագը, այս անգամ արդեն իրու Հայ Եկեղեցվո վարդապետ։

Ղալաթիո քարոզությունը տեսակ մը պատվու տիտղոս էր Թաղը բան մը չէր ինքնին, Պոլսու ամենեն անհրապուր թաղերեն մեկը՝ իր երգեցիկ սրճարաններով և անմաքուր փողոցներով ծանոթ։ Հայ ընակշություն գրեթե չուներ, թեև երբեմն, Պոլսու գրավումեն իսկ առաջ, հայ կեղրոն մը եղեր էր հոն։ Այդ պահուն ցանցառ թիվով հայ ընտանիքներ միայն կապրեին այնտեղ, ու գալապացի շատ մը պանդուխտներ՝ մեծ մասամբ քարափի բեռնակիր։

Բայց այս թաղին մեջ էր մեկը հայոց ամենեն հին Եկեղեցիներեն՝ Ս. Գրիգոր Լուսավորիչը, որ Պոլսու հայության ուստատեղին էր միանույն ատեն։ Ամեն հինգշաբթի Եկեղեցին կենար Պոլսու բոլոր թաղերեն խուժող ուստավորներով։

Եվ այս թաղը հայոց ազգային կեղրոն էր միանույն ատեն, Եկեղեցվո բակին մեջ էր Ազգային երեսփոխանական ժողովի հավաքառեղին, Ազգային մատենադարանը, ու հոն համարակիր «Ղալաթիո օշախ»՝ ազգային դեմքերե կազմված խմբակ մը, որ գավառացի պանդուխտներու կոթնած, ուշագրավ դեր կկատարեր այն օրերու հայ կյանքին մեջ։

Ղալաթիո քարոզիչ անվանման մասին Օրմանյան ինքը կզբե. «Ընդհանրապես համեստ կտեսնվիր Ղալաթիո թաղը և շատ էին զինքը թերայի Եկեղեցվույն մեջ տեսնել ուզողներ. սակայն Ղալաթիա իրեն հատուկ կարևորությունն ուներ, գուցե Ներսես ալ այդ անվանումով ուրիշ մտադրություն մը ուներ»³³։

Եվ արդարև Ներսես պատրիարք մասնավոր նպատակ մը ուներ Օրմանյանը Ղալաթիո քարոզիչ կարգելով։ Կուզեր անոր հմայքին օգտվիլ քանդիլու համար «Ղալաթիո օշախ»-ը, որ շատ կնեղեր զինքը իր մղաք բուռն պայքարով։

³² «Ազգապատում», Գ, էջ 4372.

Ապերախտ էր անշուշտ գերը, զոր Վարժապետյան Օրմանյանի կհանձներ զայն Ղալաթիո քարոզիչ կարգած ատեն, այսինքն երբ զայն կոփիկի կղրկեր իր ամենեն անողոք թշնամիներուն դեմ։

Հայ կյանքեն Ներս տեսակ մը կրակի մկրտոթյուն էր Օրմանյանի մղած խաղաղ կոփիկը «Ղալաթիո օշախ»ին զիմ։ Փորձ ըմբիշի մը համար, որպիսին էր Օրմանյանը, դուռը ին եղավ այդ կոփիկը։

Պայքարը ներկայացավ ինքնին, Ղալաթիո Եկեղեցվույն համար թաղականություն մը ընտրելու հարցը, և այդ հարցը գրեթե թնձուկ մըն էր։

«Ղալաթիո հայաբնակչությունը աննշանակ թիվ մը կազմելուն՝ առծամյա թաղականություն մը կվարեր Եկեղեցվույն մատակարարությունը, որուն տիրացած էր Ղալաթիո օշախ կոչված ընդդիմագիր խմբակը Ստեփան Փափազյանի գլխավորությամբ, որ իբրև վարժարանի տեսուլ լավ թոշակ կստանար նվազ գործունեությամբ, և Ղալաթիո խորհրդարանը իբրև պաշտոնատուն կծառայեր խմբակին։ Փափազյան փափագելով հաստատուն ձև մը տալ այդ կացության, Ընդհանուր ժողովին առաջարկ տարած և որոշում ստացած էր Ղալաթիո պանդուխտներուն թաղեցիի իրավունք տալ և ընտրությամբ խորհուրդ կազմել, վստահելով իր և ընկերին Քրիստոսուրի պանդուխտներուն մեջ վայելած ժողովրդականության»³⁴։

Ահա այդ որոշման գործադրությունն էր, որ Օրմանյանի կվիճակեր իբրև քարոզիչ, 1880 Հունվար-փետրվար ամիսներուն։

Օրմանյանի բախտեն ընտրությանց պահուն երկու ճակատի բաժնվեր էին պանդուխտները, սեբաստացիք և մշեցիք դեմքիմաց եկած ըլլալով տարբեր ցանկերով։ Մշեցիք սակայն, իրենք իրենց մեջ պառակտրված, չկրցան որևէ ընտրյալ ունենալ, և սկսան միջոցներու զիմել ջուրը ձգելու համար կատարված ընտրությունը, ուր սեբաստացիները հաջողեր էին։

Օրմանյան ճարպիկությունն ունեցավ վերացման կոնդակն ստանալ և նույնիսկ

³³ «Ազգապատում», Գ, էջ 4372.

³⁴ «Տեսություն» և խոսք, էջ 107։

կարդալ եկեղեցվոյ մեջ, կատարված իրողության մը առջև դնելով մշեցիները, որոնք առավելապես Ստեփան Փափազյանի կուսակիցներն էին, եվ ադկե ծագում առին 1880 փետրվար 14-ի հուզումնալից դեպքերը եկեղեցվոյ մեջ և բակը, որոնք հանգեցան նույնիսկ ծեծկվութի և ոստիկանական միջամտությամբ միայն վերջ գտան:

Օրմանյան հետո հնարե հաղթական. «Հաջողությունը լրացած էր, նորոնտիրին դիվանի կազմությունն ալ կատարել տվի, և հիմնական կարգադրությանց ձեռնարկեցի: Մշեցիները շուտով շահվեցան վարժարանի հոգաբարձությամբ և եկեղեցական հանձնաժողովին անդամակցությամբ, խորհրդարանը Օջախի խմբակին գումարմանց առջև փակվեցավ, թաղական գործառությանց ձևակերպություններ կատարվեցան. վարժարանին բարեկարգության ձեռնարկեցավ, Փափազյան տեսչութիւնի հանվեցավ նույնիսկ մշեցի հոգաբարձության ձեռքով, եկեղեցին ալ նորոգություններ ստացավ, և վերնատունիսկ ավելի լայն ասպարեզներու համար, եվ այդ պահի շուշացավ:

«Օրմանյան; — կըսի ինքն իր մասին, — երկար շմնաց Ղալաթիո պաշտոնին վրա. ինքն կանխավ փափագ հայտնած էր վարչականնե ավելի ուսումնական ճյուղին աշխատիլ. բայց գավառներե շուտով դիմումներ սկսան զինքն առաջնորդ ուզելու, և ինքն ալ շուզեց Վոսփորի ափանց կապված մասողի կերպարանն առնել վրան: Նպատակնին իրականացնելու մեջ ավելի շուտափութ գտնվեցան կարնեցիներ, որոնք գավառական երեսփոխաններու ստվար մեծամասնության ստորագրությամբ. Վեհապետյան Հարություն հափսկոպոսը հրաժարելու հրավիրեցին, և զայն ստանալով Օրմանյանը տեղապահ ընտրեցին 1880 մարտ 20-ին, բայց նոր ընտրության նախագահնելու համար հեռվեն տեղապահ տանելուն անհարմարությունը Պատրիարքարաննե իրենց դիտել արվելու վրա, ապրիլ 2-ին առաջնորդ ընտրեցին»³⁵:

Յոլորովին ալ ճիշտ պիտի շրջար բաժնել Օրմանյանի հրճվանքը «Ղալաթիո օջախ»-ի դեմ իր տարած հաղթանակը ավետած ատեն: Մեր նախորդ սերունդին մեզի պատմածն գիտնենք արդարեն, թե «Ղալաթիո օջախ»-ը բոլորովին ալ այն չէր, ինչ որ կներկայացնե մեզ Օրմանյան: Ճիշտ է, որ անոր կապված խմբակը կնեղեր Վարժաասեւյանը. գուրար թե Ազգային ժողովին մեջ, մանավանդ թեոլինի ձախողութեննեն հետո, և թերեւս ալ թիշ մը ամբոխավարություն կարանոր ելույթներուն մեջ, և աղոր համար ալ Օրմանյան ուրախ էր, որ «Օջախ»-ը ու ներսն պատրիարքը ազատեց սրտնեղութիւննե մը: Բայց այդ խմբակը, որքան լրած միած ենք, միենուն ատեն հետամուտ եղած է խոնարհ խավերուն, և մանավանդ գավառացի հայ պանդոխտներուն գրել-կարդալ սորվեցնել և ուաման տալ, զարիբներուն ժամադրավայր դարձնելով «Օջախ»-ը և անոնց մեջ վառ պահելով ազգային զգացումը:

Հետազարձ ակնարկը որքան ալ հեռվեն դա, պիտք չէ որ պղտոր տեսնի:

3. ԿԱՐՆՈ ԱՌԱՋՆՈՐԴ

Օրմանյան մայիս 12-ին կմեկնի Պոլսեն և 29-ին կհասնի Կարին:

Օրմանյան երր ոտք կոյսեր Կարին, Հայոց աշխարհը խմորման մեջ էր: Ուսւաթուրը պատերազմը պահ մը հույսերով օրորիկ հետո զայն, վերջացեր էր առանց ազատություն բերելու անոր: Սան-Ստեֆանոն, իր կարգին, հույսերով զայն լեցուցեր էր, թեոլինի մեջ չքացնելու համար ամեն հույս եկ Եվրոպան դավեր ու զավաճաներ էր իրեն՝ զինքը դարձյալ մինակ ձգելով իր ցավերուն և հուսահատության հետ:

Հայ ժողովուրդի տառապանքը շատ բուռն էր եղեր, անոր հույսերը շատ վառ էին եղեր մոտավոր ազատության մը համար, և Եվրոպային կրած հուսախարությունը շատ դժողակ, որպեսզի կարենար դեռ երկար զափել իր հոգեկան ցասումը:

Օրմանյան հազիվ տարիե մը ի վեր հաստատված է Կարին, երր 1881 թվականի մայիսին նույն այդ քաղաքին մեջ հիմք կդրվի հայրենասիրական գաղտնի կազմակերպության մը: Երիտասարդներ են զայն հիմնողները, բայց բուն նախաձեռնողն է հաշատուր Կերեքցյան, գործակից ունենալով Կարապետ Նշկյանը, Հակոբ Եթելիկյանը, Հովհաննես Աստուրյանը, Եղիշե Տուրուն-

35 «Խոհք և խոսք», էջ 108:

36 «Ազգապատում», Գ, էջ 4374:

յանը, և նաև Հակոբ Նշկյանը, ինչպես կպատմե այս վերջինը իր հուշերուն մեջ։ Այդ պահը սապես կնկարագրե ինքը Օրմանյան։ «Հայերու շարժումին առաջին քայլերը 1882-են կսկսին, գիտավորապես վանի և Մուշի և Կարինի գերազանցապես հարստահարված կուսակալությանց մեջ, բայց հայեր դարձյալ ելլողակողման ըմբռուս սարրերուն ընթացքը ընդորինակողներ շեղան, իրենց բոլոր ձեռնարկը անհատապես զինվելու նպատակին անդին չէր անցներ, զինյալ քուրդին և շերքեզին և լազին բռնությանց զենքով պատասխանել, և լոկ անձնապաշտպանության աշխատի կդիտեին, և երբեք չէին օրորվեր կառավարության դեմ ելլալու կամ պետութենեն ապրաւամբելու կամ անշատման դիմելու երազներով, որոնց անպաղության խորապես համոզված էին, նկատի առնելով իրենց դիրքը, իրենց տարրին զանազան պետությանց ներքն բաշխված ըլլալը, և իրենց դրացիներուն ուժն ու թիվը»³⁷։

Գաղտնի ընկերությունը իր խանձարուրին մեջ է դեռ և զբաղած է կազմակերպչական աշխատանքներով, և ահա շար դիպվածի մը հետևանքով, 1882 նոյեմբերին, թուրք ոստիկանությունը հաշօղի ձեռք անցնել գաղտնիքներու թելը։

Օրմանյան կպատմե։ «72 հոգի ձերքակալվեցան ամենն ալ ստորին դասակարգե երկաթագործ կամ հողագործ երիտասարդներ։ Այդ էր գործին իսկությունը, որուն հեղափոխության կերպարան տրվեցավ, թեպետ ձերքակալյաներուն մեջ ոչ խելքով, ոչ դրամով, ոչ դիրքով, ոչ ազդեցությամբ մեկը չկար, և իբր գլուխ կցուցվեր Խաչատուր Կերեքցյան երիզագործ աղքատ արհեստավոր մը»³⁸։

Կասկածի տակ կիյնա նաև Օրմանյան։ Օրմանյան կպատմե, թե ինչ պայմաններու մեջ ստիպված եղավ Պոլիս մեկնի իսկով։ «Օրմանյան առաջնորդ 1882 նոյեմբեր 9-ին նոր դարձած էր Մշո վանքերուն և վիճակին բննշութենեն և Ալաշկերտի և Բասենի այցելութենեն, երբոր այդ միջաղեակերը սկսան, բայց տեսներով, որ իրեն վրա ալ կասկածներ կազմվին և կտարածվին, և թե գործին լուծումը մայրաքաղաքին մեջ պիտի ըլլա, առանց սպասելու, որ զինքն ալ հեռացնելու պաշտոնական գործողություններ սկսին, վոլֆաց Կոստանդնուպոլիս երթաւ, շփոթած վիճակայինները վստահացնելով, որ գործը մղելու և ոչ թե գործե խուզ տալու համար կմեկնի, և թե յուրովի առաջնորդական պաշտոնեն պիտի չքաշվի, և

³⁷ «Ազգապատում», էջ 4406—4407.

³⁸ Անդ. էջ 4407։

ալապես Կարինե մեկնեցավ 1883 մարտ 24-ին»³⁹։

Օրմանյան պատմիչը ժամանակակից բերը մեզ պատմած ատեն; Համառոտ կանցնի շրջանի մը վրայեն, որ ամենեն ուշագրավ պահերեն մեկն է հայ ժողովուրդի պատմության և զոր ինք կրնար, որևէ մեկեն ավելի, լուսաբանել մեզ լրիվ։ Անշուշա որ դեպքերու մասին, որոնք տեղի ունեցած էին իր երիտասարդ տարիեին, երբ դեռ ինքն ալ լցուն էր տարրեր երազներով և տարրեր խանդավառությամբ, չէր կրնար նույն տրամադրությամբ խոսիլ «Ազգապատում»-ը շարադրած ատեն, բայց կարող էր մեզ տալ ճշգրիտ տվյալներ գեպքին իսկական բնույթին մասին։

Ավելին, Օրմանյան կփորձե մեղմել դեպքին արքեքը, ճիշտ ինչպես պիտի ըներ այն օրերուն և ճիշտ ինչպես որ հավանաբար ըրած ալ է Պոլս իշխանությանց մոտ իր դիմումներուն ատեն՝ դատապարտյալներուն համար ներում կորզելու իր փորձերուն առթիվ։

Բարեբախտաբար ժամանակակից աղբյուրներ և գեպքին մասնակցողներու հետագային գրած հուշերը հնարավորություն կուտան մեզ դեպքերը ավելի ճշգրիտ տեսնելու, քան ինչ որ պիտի կրնայինք քաղել Օրմանյանի պատմածներեն։

«Էրզրումի ընկերության դերն ու նշանակությունը թերագնահատողների մեջ, խոսում էր նաև քաղաքական նկատառումը, — կգրե պրոֆ. Ս. Ներսիսյան։ — Նրանք դիտավորյալ կերպով աշխատում էին աղմուկ շառաջացնել, գործին լուրջ կերպարանք շտալ, որպեսզի առիթ շտան սովորական կառավարությանը՝ հայկական նոր հայածաններ և ճնշումներ սկսելու համար Պատահական չէ, որ արևմտահայ մի շարք գործիներ երկար ժամանակ լուրջուն պահպանեցին և փորձեցին մոռացության մատնել ընկերության հետ կապված դեպքերը։ Բնորոշ է այն հանգամանքը, որ «Մասսիս»-ը մի քանի անգամ ակնարկներ արեց այն մասին, թե Թիֆլիսի «Մշակ»-ը անխոհեմ քայլ է անում, երբ կրզրումի գաղտնի կազմակերպությունն աշխատում է ներկայացնել որպես հակասուկթանական քաղաքական մի կազմակերպություն»⁴⁰։

Պրոֆ. Ներսիսյան կգրե այս առթիվ, թե «Հայկական ՍՍԾ Գիտությունների ակադեմիայի Գրական թանգարանի արխիվում պահվում են գաղտնի կազմակերպության

³⁹ Անդ, էջ 4408։

⁴⁰ Ս. Գ. Ներսիսյան, «Հայ ժողովրդի պատառքական պայմանագիրը թուրքական բռնապետության գիմ 1850—1870 թ.թ., Երևան, 1955, էջ 183։

զեկավար հաշատուր Կերեքցյանի փոքր եղբոր՝ Տիգրան Կերեքցյանի հուշերը: Այդ հետաքրքրական փաստաթղթից պարզվում է, որ Կազմակերպությունը սերտ կապեր է ունեցել Թիֆլիսի հայ ինտելիգենցիայի հետ և որ հաշատուր Կերեքցյանը, ինչպես նաև զպունի ընկերության ակտիվ գործիչներից Կարապետ Նշկյանը Թիֆլիս են գնացել՝ կազմակերպության համար անհրաժեշտ դրամական միջոցներ հավաքելու և այլն⁴¹:

Գալով Օրմանյանի ունեցած գերին Կարնո շարժումներուն մեջ՝ լիովին չէ բացատրված ցարդ:

Օրմանյան նույնքան ժլատ է իր գերը մատնանշած ատեն Կարնո դեպքերուն մեց, Տեսակ մը մ'տավախություն դեռ կհամենա վրան, ինչպես այն օրերուն, երբ Համիդի մարդիկը զինքը ևս կուգեին պատասխանատուներու շարքը բերել: Կրավականանա մեզ ըսելով, թե ինքը ևս կասկածված էր: Պետք է հետևարար զանազան առիթներով իր սպարդեցուցած ակնարկներով գոհանանք, կամ տարրեր աղբյուրներու դիմենք՝ գիտնալու համար գոնե, թե շարժման կողմնակից էր ինքն ալ, և թե որևէ կապ ունե՞ր գլխավոր դերակատարներուն հետ:

Օրմանյան լըսեր մեզ որոշ, թե ինչ էին իր մասին հարուցված կասկածները: Պետք էր, որ անոնք շատ բուռն եղած ըլլային, սակայն, որպեսզի Օրմանյան ստիպվեր իսկույն Կարինեն հեռանալ անախորժություններ կանխելու համար, Պետք էր, որ հեռվեն կամ մոտեն կապ ունեցած ըլլար Կարնո դեպքերուն հետ, որպեսզի կազմվեին այդ կասկածները, և արձագանք գտնեին նաև դուրսը, հասնելով մինչև ցարական շրջանակներուն⁴²:

Հ. Նշկյան, որ իր եղբոր՝ Կարապետ Նշկյանի հետ միասին «Պաշտպան Հայրենյաց»-ի հիմնադիր անդամներն է եղած և հետագային կրցած է արտասահման անցնիլ, 1930-ին լուս ընծայեց իր հուշերը՝ «Առաջին կայծերը» խորագրին ներքև Նշկյան իր հուշերուն մեջ կպատճե, թե «Պաշտպան Հայրենյաց»-ը կապեր ունեցած է ինչպես Թիֆլիսի հայ մտավորականության, նույնպես Ներսես Վարժապետյանի, Խրիմյանի և Օրմանյանի հետ: Շարժման դեկավարները թղթակցություն պահած են առաջին հերթին Խրիմյանի հետ, որ այդ պահուն վան կդատնվեր: Խրիմյան, Նշկյանին ուղղած էր մեկ նամակին մեջ, կգրե վանի երիտասարդությանը մասին ու կըսե: «Պահապահ-տակավ կմեռնի անառաջական առաջականության մասին ու կըսե:

41 Մ. Գ. Խերսիյան, հիշած աշխատությունը, էջ 190.

42 Անդ, էջ 188:

ջորդե ազատ արիական հոգին, Զորեք արյուրացյան գերության մեռյութենեն հայն իր թաղած գուշակը կվերցնե: Զգիտեմ Աղպին թերահավատները կհավատան նորա հարության:

Նույն այդ Նշկյանը, որ իր անձնական գործերով այդ օրերուն Պոլիս պիտի երթար, իր ընկերներուն կողմե պաշտոն կստանա այցելել Ներսես պատրիարքին և անոր ևս կարծիքն ստանալ: Վարժապետյան գորունակությամբ կլսե Նշկյանի տեղեկությունները, խորհուրդ կուտա «շրջահայաց և խոհեմ ըլլալ», ու հետո կավելցնե: «Երանի թե գավառացիներդ ավելի կանուխեն ինքնագույն գործելու գիտակցությունն ունենայիք և ամեն բան Պոլսեն ու պոլսեցիներեն սպասելու ակնկալությամբ անգործ շմնայիթ»:

Օրմանյանի մասին խոսելով Նշկյան կրսե, որ կողմնակի ճանապարհներով տեղեկություն ուներ ընկերության մասին և իր համաձայնությունն ու խրախուսանքը հայտնած էր անոր:

Հակառակ վերջին օրերու իր տատամսումներուն, Օրմանյանի գերը Կարնո ազգային խմբումներուն մեջ պարզ կտեսներ այն օրերուն ամեն մարդ:

Տարիներ հետո, երբ Ազգային ժողովի համբավակոր նիստին մեջ իր պաշտպանողականը կիսուեր Զոհրապ, կըսեր Օրմանյանի համար. «Օրմանյան սրբազն պատրիարք ըլլալի առաջ, մեր ամենեն գնահատելի և ազգական եկեղեցականներեն մեկն էր. գնահատություն մը՝ որ նոր չիմ ըներ, այլ 14 տարի առաջ ըրած եմ իմ «Մանոթ դեմքեր»-ուա շարքին մեջ՝ իրեն հատկացված հոգվածով մը: Այդ հոգվածին մեջ՝ խիստ գրաննության մը աշքեն գրեթե փախցնելով ժողովուրդին հասկցնելու համար այս եկեղեցականին հեղափոխական ոգին, ըսած էի. «Օրմանյան սրբազն մեր եպիսկոպոսներուն երիտասարդը և մեր իրիտասարդներուն եպիսկոպոսն է»: Ահա՝ այս էր այդ թվականին իմ համոզումս, որ բոլոր երիտասարդությանն ալ համոզումն էր Արդյոք այսպիսի կարծիք մը հայտնելով միաւլած էր. իսկ իրեն Կարնո առաջնորդ՝ հեղափոխական գործունեություն մը ունեցավ: Անուրանալի է, որ Կարնո մեջ առաջին ցնցումը իր օրովը եղավ, ու շարժման գումար ինք գտնվեցավ: Այդ պատճառով ալ Օրմանյան սրբազն Պոլիս բերվեցավ և հարցաքննության ենթարկվելին հետո հազիկ կրցավ իր օձիքը ազատել:

Օրմանյան լըսեր մեզ նույնպես, թէ ինչ կերպով հաշողեցով ան ցրվել իր մասին նղած կասկածները, և վերադառնալ Կարին իր պաշտոնը շարունակելու համար ևս երեք տարի: Այս տեսակետով Օրմանյան բախտավոր բացառություն մըն է գավառական առաջնորդներուն մեջ, զորս իսկուն Պոլիս փոխադրել կուտար Համբիդ առաջին կասկածի մը վրա: Համբիդի օրով տեսակ մը աքսորավայր էր Պոլիսը կասկածված հոգեռականներու համար: Օրմանյան հաջողեցավ ցանցին մեջ ջինալ, զառնալ պաշտոնին և զայն թողով բնականն պայմաններու մեջ: Ինչ որ հայտնի է լրիվ՝ Օրմանյանի թափած ջանքերն են աղետներու առաջքն առնելու համար, Պոլիսու մեջ կատարած իր դիմումներով:

Օրմանյան Պոլիս հասած էր 1883 ապրիլ 5-ին, մեկ կողմեք իր մասին հարուցված կասկածները փարատելու և մյուս կողմեք Կարնո դատապարտյալներուն վճիռը բեկանելու տալու համար:

Արդարեւ, Կարնո դատարանը 1883 մարտին դատած էր 72 կալանավորները և իր վճիռը արդեն տված էր, երբ Օրմանյան Պոլիս կհասներ:

Օրմանյան, իր դիմումներուն ակնարկելով, կդրեւ, «Եվպարքոսության, նախարարությանց և վճռաբեկ ատենակալաց մոտ ներսես պատրիարք ուժնապես կատարեց պետք եղած պաշտոնական դիմումները, այլ յոր տկարության պատճառով նույնինքն Օրմանյանի հանձնած էր հետապնդելու և բացատրություններ տալու գործը, և արդյունքն եղավ ամբաստանության որոշումին ջնջումը: Բայց երբ դատը դարձյալ Կարնո դատարանին հանձնվեցավ, միևնույն որոշումը կրկնվեցավ և այլևս զայն ջնջել տալու աշխատությունը ավելորդ դատվեցավ»⁴³:

Օրմանյանի ուղղակի և անուղղակի դիմումները Պոլիս վճռաբեկ ատյանին մոռայն օգուտար միայն տվին, որ վճռաբեկը հրահանգ դրկեց Կարին վերաքննել նախադատ ատյանի վճիռը: Նոր վճիռը շատ ալ տարրեր չեղավ առաջինեն: Միայն թէ 16 հոդի ևս ազատ արձակվեցան 56 դատապարտյալներեն, իսկ մնացյալներեն հաշվառուր Կերեքցյանի պատիժը դարձյալ 15 տարի մնաց, և մյուսները դարձյալ 13, 10, 7, 6 և 5 տարվան պատիժ ստացան:

Ուրիշ ելք չկար, բայց եթե դիմել կայսեր, «Կայսերական ներման դիմումներն սկսան պատրիարքի հովանավորությամբ և Օրմանյանի ծեռովով, որոնք վերջապես հաջողությամբ պասկալեցան, և առաջին 4-ին զատ մնացյալ 36-ին պատիժին երկու երրորդին

⁴³ «Ազգապատում», 4, էջ 4466:

ներվելուն հրամանագիրը ստացվեցավ 1884 հունիս 6-ին», որով անոնք իրենց պատիժը լրացուցած կըլլային և «1884 հունիս 22-ին արձակվեցան Կարնո բանտեն, ժողովրդական մեծ խնդության մեջ»⁴⁴:

Օրմանյան կըսե ի վերջո, թէ հաշողեցավ ցրվել նաև իր մասին տարածված կասկածները. «Օրմանյանի մասին եղած կասկածները բոլորովին փարատված էին, մանավանդ եպարքոսի և նախարարաց հետ անձնական տեսակցություններեն ետքը, որոնցմենք հանձնարարություն իսկ ստացած էր ներքին գավառաց բարեկարգության համար կազմված հանձնածողովին հետ խորհրդակցիլ, և ինչ-ինչ օգտակար առաջարկներու համար գրություն ալ ներկայած էր»⁴⁵:

Կարնո դեպքը, որուն վրային համեմատարար հարկանցի կանցնի Օրմանյան, առաջին պոռթկումն էր հայ ժողովուրդի դարավոր ստրկության:

Նկարագրելով դերը, զոր այդ համեստ պոռթկումը ունեցավ, պրոֆ. Մ. Գ. Ներսիսյան կըսե. «Մենք բերեցինք բոլոր այն հիմնական տվյալները, որոնք հայտնի են մեզ էրզումի գաղտնի կազմակերպության մասին: Ի՞նչ եզրակացություն կարելի է աներ Վերը բերված տվյալները կասկած չեն թողնում այն մասին, թէ «Պաշտպան Հայրենյաց» ընկերությունը բաղաքական մի կազմակերպություն էր, որ իր առաջ խնդիր էր դնում ազգային ազատագրական պայքար մղել թուրքական բռնակալության դեմ: Կազմակերպության մեջ եղել են բուրդուական տարրեր (առևտրականներ), բայց նրա հիմնական մասը կազմում էին աշխատավորության ներլայացացուցիչները (գյուղացիներ, արհեստավորներ):

Կազմակերպությունը խոր արմատներ է ունեցել ժողովրդական մասսաների մեջ, կապ է հաստատել աշխատավորական խավերի հետ: Հենց այս խավերն էլ հիմնականում ընթացք և գոյն են տվել ընկերության աշխատանքներին: «Պաշտպան Հայրենյաց» ընկերությունը կապ է ունեցել Արևմտյան Հայաստանի մի շարք գավառների հետ: Ավելի ընկերության ղեկավարները քայլեր են կատարել կապեր հաստատելու նաև Անդրկովկասի քաղաքական գործիչների հետ: Այս փաստերը մեջ իրավունք են՝ տալիս կազմակերպությունը դիտելու ավելի լայն ֆոնի վրա: Համեստ գեպս մի բան պարզ է, որ քաղաքական այդ ընկերությունը հանդիսանում էր ոչ միայն էրզումի գավառում, այլ ամբողջ Արևմտյան Հայաստանում խմբվող

⁴⁴ Անդ, էջ 4467:

⁴⁵ Անդ, էջ 4468:

ժողովրդական-ազատագրական շարժման
ծնունդը

Էրզրումի գաղտնի կազմակերպության
հայտնաբերումը և այդ կապակցությամբ
տեղի ունեցած բանտարկություններն ու զա-
տավարությունը խոշոր ազդեցություն գործե-
ցին արևմտահայ ժողովրդի ազգային-քա-
ղաքական ինքնազիտակցության դարդաց-
ման վրա... Էրզրումի դեպքերը, որոնց մա-
սին բավական շատ թղթակցություններ
տպվեցին Հայկական մամուլում, զգալի ար-
ձագանք դատան նաև արեւածայ առաջավոր
երիտասարդության մեջ»⁴⁶:

Օրմանյանի - Կարինին բացակայությունը
մոտ երկու տարի տևեց: Այդ շրջանին էր, որ
զանազան պաշտոններ առաջարկվեցան ի-
րին. 1884 հունիս 7-ին վանահայր բնարված
էր, իսկ նույն տարվան հունիս 14-ին հրա-
վիրված էր Էջմիածնի Գնորդյան ճեմարան
տեսչության, մյուս կողմէ Պոլսո Ազգային
կեդրոնական վարչությունը պնդած էր,
որ պատրիարքական փոխանորդությունն
ստանձնե, իբրև միակը, որ կրնար պատրիար-
քական գործերը վարել ներսես պատրիարքի
ծանր հիվանդության այդ օրերուն:

Օրմանյան մերժած էր բոլոր առաջարկ-
ներն ալ Հայտնելով, որ ինք ուստուվ կապ-
ված է Կարնո թեմին:

Եվ սակայն Պոլիս գանված այդ երկու տա-
րիներուն, Կարնո գործերով զբաղելով մեկ-
տեղ, Օրմանյան վարեց զանազան պաշտոն-
ներ: 1883 ապրիլ 12-ին անդամ նշանակվե-
ցավ վանորեից խորհուրդին և վիճակաց վե-
րակազմության և բարեկարգության համար
կապված հանձնաժողովին. Քիչ ետքը, սեպ-
տեմբեր 24-ին, անդամակցեցավ Կիլիկիո
Կաթողիկոսության խնդիրներուն համար
կազմված հանձնաժողովին ալ, իսկ 1883
մայիս 3-ին առժամաց քարոզի կարգված
էր Պերայի եկեղեցիներուն, և իր այդ հան-
գամանքով գործոն դեր ունեցավ թաղին մեջ
կատարված շինարարական և մատակարա-
րական ձեռնարկներուն մեջ, որոնց զիսա-
վորն էր Շիշլիի գերեզմանատան կազմա-
կերպումը:

Առեն էր սակայն Կարին գառնալու:

Օրմանյան, Պոլսեն մեկնած 1884 սեպտեմ-
բեր 24/6 հոկտեմբերին, 15 օր հետո հասնի
Կարին, «լոիկ-մնջիկ», այսինքն առանց կար-
նեցիներուն գիտցնելու իր ժամանումի օրը,
ցուցերու տեղի շտալու և ավելի ևս չգրգռե-
լու համար իր գեմ տեղվույն կուսակալը,

⁴⁶ Մ. Գ. Ներսիսյան, Հիշված աշխատությունը, էջ
197—198:

որ նախապես ալ իրեն հանդիպ շատ բար-
յացակամ չէր, մանավանդ 1882-ի դեպքեն
հետո:

Կարին վերադառնալի հետո 1884 հոկտեմ-
բերին, Օրմանյան ձեռք կառնի ընդհատված
աշխատանքները. «Առաջին գործերին մին
եղավ յոթր տարի բանտարկության դատա-
պարտված անձերուն ալ աղատությունը ձեռք
բերիւ, և զոտով հաջողեցա կուսակալին ալ
ձեռնվությամբ, և համեմելս ամիս մը հո-
քը, 1884 նոյեմբեր 14/26-ին, անոնք ալ
արձակվեցան»⁴⁷:

Իր գործունեության մաս կկազմեին նաև
հովական այցելությունները. «Առաջնոր-
դական պաշտոնին պահանջներին մին ալ
հովական այցելությունն է, կացությունը
քննելու, խնդիրները ուսումնասիրելու, քա-
րողելու և հրահանգելու նպատակով և կրնամ
հայտարարել, որ շատ քիչ բացառությամբ
կարն և հարակից վիճակներուն ամեն կող-
մերը այցիլած եմ, ձեմովան միջոցին Կալ-
նո գաշտը, և ցանքի ու հունձքի միջոց ժա-
մանակին շրջակա թիմերը»⁴⁸:

Կարնո գավառական ժողովի ընծայակա-
նով, 1886 հունիս 8-ին Էջմիածնի մեջ Օր-
մանյան եպիսկոպոս կձեռնադրվի Մակար
կաթողիկոսին: Այդ առթիվ իր շփումները
կաթողիկոսին և ճեմարանի տեսչության
հետ՝ զրգիռ պիտի դառնային Էջմիածնի հրա-
վիրելու զայն շուտով:

Էջմիածնին իր վիճակը շդարձած, Պատ-
րիարքարանը կհրահանգել իրեն Վան մեկնիլ՝
լուծելու համար տեղվույն վեճերը, որոնք,
ծագած Պողոս եպիսկոպոս Մելիքյանի շուրջ,
4 տարին ի վեր հուզման մատնած էին Վա-
նի վիճակը և հայ ազգային տարեկառությանց
մեջ ծանոթ են Պողոսյան և Ապողոսյան վե-
ճեր անոնմով: Օրմանյան հաջողի, հակա-
ռակ Պողոսի բոլոր սաղբանքներուն, բնակա-
նուն վիճակ ստեղծել, «այս կերպով միան-
գամ ընդմիշտ Վանը ազատելով Պողոսի
դարձածներն, որ այլևս ստիպեցավ կի-
մա վանքը մեկնիլ և գործունյա ասպարեզն
քաշվեցավ մինչև իր մահը»⁴⁹:


Օրմանյան Պատրիարքարանի հրահանգով
1886 օգոստոսին հասնդիպի նաև Աղթամար,
ուր նույնպես վիճեր կային Խաչատուր կա-
թողիկոսի և իր միաբաններին ոմանց միշտ,
և իր քննությանց արդյունքները կտեղեկա-
գոր պատրիարքարան:

Օրմանյան 1886 օգոստոս 23-ին Վանեն
Կարին վերադառնալի հետո, միենույն թա-

⁴⁷ «Խոհեմարդ և խոսր», էջ 130:

⁴⁸ Անդ, էջ 131:

⁴⁹ «Ազգապատում», Գ, էջ 4585:



փով կնվիրվի ընդհատված աշխատանքներուն: Իր առաջին գործը կը լւա «Կարնոն բանտարկելոց վերջին մնացորդ երեխներուն ներումն ու ազատությունը հետապնդել, որոնք ազատվեցան սեպտեմբեր 3-ին»⁵⁰:

Հովվական միամսյա այցելութենի մը հետեւ թորոտմի, Կիսկինի և Սպերի վիճակներուն, երբ հաղիվ դարձած էր Կարին, 1887 հունիս 24/6 հովհանն կը լուրջանի Մակար կաթողիկոսի կանդակը, որ կհրամայեր էջմիածին գալ՝ դասախոսի պաշտոն ստանձնելու համար ճեմարանի մեջ:

«Օրմանյանի Կարնոն առաջնորդությունը յոթը տարի անեց 1880 մայիսին սկսելով, որուն մեջ միայն վերջին տարին եպիսկոպոսական աստիճանովվէ: Այս յոթը տարիներու միջոցին, թեպես տարիուկես Կոստանդնուպոլիս անցուց 1883-ի 1884, սակայն ոչ պաշտոնի դադրեցավ և ոչ գործը լրեց, այլ Կոստանդնուպոլիս գտնվելով իսկ անձամբ ուղղեց և վարեց գործերը Արծնյան Գրիգոր քաջանայի փոխանորդությամբ: Յուր օրով Կարնոն առաջնորդական վիճակը նոր ընդարձակություն ստացավ, Սպերի զատքիի, Դերջանի, Բասենի, և Խնուափ վիճակներուն իրեն հարակից Կարինի հանձնվելով, որով երկու հարյուր ավելի եղած էին վիճակին հայաբնակ տեղերը: Նա առաջնորդութենեն ալ ոչ թէ յուրովի, այլ պարզապես կաթողիկոսական բացարձակ հրամանով

հրաժարեցավ, այն ալ առաջնորդութենի ուսուցության անցնելու համար»⁵¹:

Օրմանյան հպարտ է Կարնոն իր առաջնորդությամբ. «Կրնամ սիրտի հանդարտությամբ հայտարարել, թե անօգուտ չեղա Կարնոն զիսավորապես հարակից վիճակներուն ընդարձակվելով, վարժարանաց դարձված հատուկ հոգածությամբ, ներքին վարչական ձևերու կարգադրությամբ, և ազգային զարգացման տրված քաջալերությամբ: Ծառակար եղան նաև անձամբ այցելություններս, Սանասարյան վարժարանի Կարնոն մեջ հաստատիր, և մանավանդ աղքային տագնապին հաշող վերջավորության համար թափված ծիգերը: Երբեք բարեհաջող պաշտոնավարության վկայություն պետք է ընդունվի մինչև այսօր Կարնոն մեջ իմ անձին գովությամբ հիշվիլլ և իմ օրերուս օրհնությամբ փնտուիլը»⁵²:

Մակար կաթողիկոս երբ հրաման կրներ Օրմանյանի էջմիածին երթալ ուսուցչական պաշտոն ստանձնելու համար ճեմարանի մեջ, խղճահարությունը չուներ, թե առանց գովիդի կիողող ընդարձակ վիճակ մը, անոր կարծիքով «Եկեղեցվո օգուտին տեսակետով պակելի լավ էր վիճակ կառավարողներ հասցնել, քան թէ վիճակ մը կառավարել»⁵³:

Օրմանյան, ճիշտ է, հայապային հասցուց վիճակ կառավարողներ, բայց միևնույն ատեն Կարինով ցուց տվավ, թէ ինչպես պետք է վիճակ մը կառավարել

4. ՍՈՎԵԼՈՑ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՔ

Օրմանյանի գավառական գործունեության ուշագրավ դրվագներին մեջն ալ իր բերած աշակցությունն է Սովելոց հանձնաժողովին:

Ռուսկելուր պատերազմը աղետ էր բերեր գավառի հայության, մանավանդ այն շրջաններուն մեջ, որոնք կովկներու թատերաբեմ էին եղեր: Աղետը ավելի և շեշտվեր էր երաշտության պատճառով, որոնք քանի մը տարիի ի վեր մատնված էին արևելյան նահանգները: Հայությունը կդալարվեր սովի ճիրաններուն մեջ: Պոլսո բոլոր թաղերուն մեջ նպաստի հանձնաժողովներ կազմվեր էին, որոնք հետո միացան կեղրոնական հանձնաժողովի մը հսկողության տակ, որ 1880 հունվար 12-ին մարմին առած էր ներսես պատրիարքի կոնդակով և որ Սովելոց հանձնաժողով կոչվեցավ:

Սովելոց հանձնաժողովը, որ հաջողեցավ 39 000 ոսկիի գումար մը հանգանակել, նախախնամական դեր մը կատարեց սովորական շրջաններուն մեջ: Նպաստի սովորական

մարմին մը շեղավ ան, այլ «վարժարաններու ալ օգնեց, հողագործական միջոցներ հայթայթեց, նորանոր մշակություններ պատրաստեց, զանազան արհեստներ քաջալերեց, և երկրագործական աշխատառությունը դյուրացուց կենդանիներ և գործիքներ փոխատվության ձևի ներքեւ հանձնելով, զի չէր ուզեր, որ անաշխատ նպաստը վտանգավոր դատարկապորտության և մուրացիկ ստորոտության ծառայեր:

... Վանա մեջ Խորիմյանն էր բոլոր նպաստներուն գործածության նախագահը, Կարնոն մեջ Օրմանյան եղավ երկու կողմերի հարաբերությանց և առաքմանց միջնորդը, զի զեր կպակսին Կարինե անդին ներքին գավառներու հետ ուղղակի հարաբերությունները»⁵⁴:

51 Անդ, էջ 4587—4588:

52 «ԵԽՈՒՅ» և խոսք, էջ 141:

53 «Աղքապատում», 9, էջ 4588:

54 Անդ, էջ 4875:

Ավելցնենք, որ Օրմանյանն ինքն էր, որ խմբագրեց Սովելոց հանձնաժողովի գործունեության տեղեկագիրը 1884-ին, երբ Կարինեն Պոլիս էր եկած: Տեղեկագիրը լույս տեսավ 1886-ին:

Օրմանյան ապագային պարծանքով հիշած է նաև իր գործունեությունը Սովելոց հանձնաժողովին մեջ:

5. ՃԵՄԱՐԱԿԱՆԻ ՏԱՐԻՆ

Եվ ահա Օրմանյանի կյանքին մեջ կրցագի շատ կարճ, բայց և շատ ուշագրավ էջ մը՝ իր ուսուցչության տարին էցմիածնի ճեմարանին մեջ:

Ճեմարանը, 1869-ին հիմնարկված Գևորդ Դ կաթողիկոսի կողմէն և 1874-ին բացված, երկար ատեն չէր կրցած մտնել իր բուն գերին մեջ Զէր կրցած ունենալ իր համապատասխան վարիչը:

Այդ կացության ակնարկելով է, որ Օրմանյան կը բ. «Երբոր Ճեմարանի մասին Գևորդի տարած հոգածությունը կառվենք, պետք չէ լրենք, որ այն յուր իսկական նպատակին չծառայից, որ էր ժառանգավորաց ճեմարան ըլլալ և ուսումնական ու զարգացյալ հոգեռականներ պատրաստել. զի հին ժառանգավորաց վարժարանը, որ Ճեմարանի բացման ատեն առժամապես պահպեցավ, 1882-ին դոցվեցավ, բայց Գևորգի ժամանակ և ոչ մի շրջանավարտ կամ աշակերտ հոգեռականության շհտուեցավ և միաբանության շանդամակցեցավ: Այս մասին չենք կրնար ուղարկի Գևորգը մեղադրել: զի նա վարժարանական նիրքին մասնագիտությամբ ճոխացյալ անձը չէր, թիվեա արտաքին դործոց համար մեծ կարողություն ունիր»:

Օրմանյան եթե կզբուշանա Գևորդ կաթողիկոսը մեղադրել Ճեմարանի կաղալուն համար, նույն վերապահությունը չունի Նարապետի և Այլապալսկիի համար. «Երբոր առաջին եպիսկոպոսական ձեռնադրությունը կկատարեր 1867-ին, [Գևորգ կաթողիկոս] Խորեն Գալֆայանն խոստում առած էր երեք տարի էցմիածին մնալ և ուսուցչություն ընել, և նոր բացվելիք ուսումնարանին մեջ աշխատիլ: Սակայն կաթողիկոսին հետ Պետերուր եթաթի ետքը պատճառանքով մը առժամա բացակայության արտօնություն ստացավ, և անզամ մը Կոստանդնուպոլիսի երթալին ետքը այլևս չկրասկարձավ:

Այն ատեն դործը հանձնվեցավ Գարբիել Այլապալսկիի եպիսկոպոսին իր վարժարանական փորձառությամբ ճոխացյալ անձի, բայց նա ալ Տփղիսի առաջնորդությունը պարման դրավ յուր հանձնորդության, և Տփղիս մնալով էցմիածնի ճեմարանը կառավարել սկսավ տեղեկատուներու ծանոթյուններով և թերագրություններով, ուրուն հետեանքն եղավ 1878-ին երրորդ դա-

սարանին բմբուտանալը և խմբովին արտաքիլը: Ճեմարանի ծրագիրն ալ [Փարիզի] Մուրատյանի և Հայկազյանի պես սովորական վարժարաններու նմանողությամբ կազմվեցավ, ավելի ընդհանուր քան եկեղեցական ուսմանց դրությամբ. այնպես որ Ճեմարանը բոլորովին ձրի և ազատ երկրորդական ուսումնարանի դիրքն առավ, և զարմանալու չէ, եթե ձրի երկրորդական ուսումնաներու ներքեւ աշակերտաց թիվը զյուրավ և տարապայման աճեցավ»⁵⁵:

Մակար կաթողիկոսի օրով էր միայն, որ Ճեմարանը պիտի սկսեր ժառայիլ իր բուն կոչման:

Միալ է անշուշտ ըսել, թե Գևորդյան ճեմարանը իր գերբ կատարած չէր մինչև այն ատեն: Սկզբնական այդ 18 տարիներուն, ճիշտ է, այն բեղմնավորությունը չունեցավ Ճեմարանը, ինչ որ պիտի ունենար իր կյանքի մնացյալ տարիներուն մեջ: Բայց այդ շրջանին ալ անոր սեմեն դուրս եկան հայ մտավորականության կարկառուն դեմքերն շատերը, ինչպես և մեծ թիվ մը թիւշ-շատ պատրաստված երիտասարդության, որ իր կարգին զեր կատարեց հայ իրականության մեջ:

Մակայն Մակար էր, որ հայ հոգեռականություն մը պատրաստելու մտահոգությունն ունեցավ: Այդ նպատակին համար ուսուցչական ընտիր խոսմբ մը հավաքից Ճեմարան: Եվ սակայն անոր ալ պակսեցավ բուն մարդը, որ պիտի կարենար հոգեռական նոր սերունդի մը կորիզը խմորել:

Այդ տնձը Օրմանյանը պիտի ըլլար հետո: Գետք է ըսել, որ վաղուց է փորձեր եղած էին Օրմանյանը լծելու այդ առաքելության: Այդ փորձը կսկսեր Կարապետ Եղիանցեն, որ երբ 1879-ին Պոլիս կուգար, փափազը կունենար Մաղաքիա վարդապետ Օրմանյանը ճանչնալու, որ թեև զեր չէր դարձած Հայ եկեղեցվո գիրկը, բայց արդեն շփում կպահեր ներսես Վաղժապետյանի հիւ Եղիանց Օրմանյանը «ճարտար զարձվածներով կհրավիրեր Հայ եկեղեցվո ծոցը իսկույն դառնաւ, և էցմիածնի Ճեմարանին տեսու-

⁵⁵ «Աղքաղատում», Գ, էջ 4241—4242.

թյան անվանել տալու հրապույրն ալ կառացարկեց⁵⁶:

Օրմանյան կզգացներ Եղյանցին, թե Հայ Եկեղեցին ժողը դառնալու ծրագրը վաղուց ունի, բայց Վարժապետյանի խորհուրդով դեռ պիտի սպասե ատեն մը:

Ավելի հետո, 1884 հունիս 14/26-ին, էջմիածնի Սինոդին կհրավիրվի Ճեմարանի տեսչությունն ստանձնելով⁵⁷, այն պահուն, երբ Պոլիս կմեկնար Կարն գործերով: Պատշաճ չի նկատեր այն ատեն գոհացում տալ հրավերին, որուն անշուշտ սիրով ընդառաջ պիտի երթար, եթե Կարն հոգեբը լըլլային:

Դեռ պետք է անցներ քանի մը տարի, որպեսդի Օրմանյան մուտք գործեր Ճեմարան:

Բայց թողունք, որ Օրմանյան ինքը պատմի իր մուտքը Գեորգյան Ճեմարան, «Գեորգի հիմնած Ճեմարանը, հիմնարկությամբ գնահատելի, բայց արդյունավորությամբը քննադատելի էր, զի եկեղեցական զարգացման և ուսումնական բարձրացման օգտակար չէր եղած, և այնպես դատեց Մակարա, և Ճեմարանի բարձրացման և զարգացման հատուկ մտադրություն դարձուց: Որշափ ոռսահայոց մեջ ընտրելավույն ուսուցիչներ կային՝ Ճեմարանի մեջ հավաքեց:

Արշակ Նահապետյան, Սեղրակ Մանդինյան, Կարապետ Կոստանյան, Փիլիպոս Վարդանյան, Ստեփան Պալասանյան, Մկրտիչ Պալյան, Սարգիս Գաբրիելյան, գործի հրավիրվեցան գոհացուցիչ պայմաններով, Նահապետյանի տեսչության նկրք, և նախաձեռնության ընդարձակ արտոնությամբ: Բայց գործի սկսելին ետքը նույնինքն հրավիրյալ ուսուցիչներ զգացին, թե իրենք ամենքն ալ արտաքին ճյուղերու մասնագետներ են, իսկ կրոնական ճյուղը, որ հիմնական և էական է և պետք էր ըլլար նոգեռը ճեմարանի մը համար, իրենց համահավասար և համալսարանական ավանդող շուներ, և հաղիվ թի Սուրբ Գրոց պատմությունը կավանդվեր ստորին դասարաններու մեջ, և բարձրագույն լսարաններու մեջ կրոնական դասեր կպակսեին: Ուստի այս կետը կաթողիկոսին մտադրության ներկայացուցին և պատասխան ստացան կարող անձը գտնել և առաջարկել, որպեսզի ինքն ալ գործի հրավիրի: Ուսուցչական խումբը երկար վարանումն ետքը, հուսկ ուրիմն Նահապետյանի թելադրությամբ, Օրմանյանի անունը տվալ, որ Կարն առաջնորդությունը կվարեր, և ուր տեսած էր զայն Նահապետյան 1885 հունիսին, երբ Մկրտիչ Մանասարյանի ընկերացած էր, և նորա բարերարությամբ

բացված Կարնո վարժարանին այցելության էր հկած: Երբոր Մակար կխորհրդ Օրմանյանը ուսուցչության հրավիրել, Կոստանդնուպոլսու Պատրիարքարանին եղիսկոպոսացուներու անունները հաղորդվեցան, որոնց մեկն էր Օրմանյանը, ուստի գործը հետաձգվեցավ անոր հասնելուն: Օրմանյան անցուղարձեն անտեղյակ հետաքրքրությամբ կդիտեր ճեմարանի ուսուցչաց կողմեն իրեն հանդեպ ցուցված մտադրությունն ու մերձավորությունը, որ կերևա թե զայն անձամբ ճանշնալու նպատակն ուներ, և միայն ճեռնադրության հաջորդ առողուն, 1886 հունիս 9-ին, իրեն կառաջարկվեր Կարն առաջնորդի բներնեն հրածարիլ, և ճեմարանի ուսուցիչ մնալաց⁵⁸:

Օրմանյանի համար շկար ավելի գեղեցիր առիթ իր բուն կոշման անցնելու, քան հրավերը, որ իրեն կըլլար: «Նա առաջարկին հետ ի սրտե համակրելով մեկտեղ, հարկ կսեպիր դիտել տալ, թե... առանց վիճակին գիտակցության և առանց Պատրիարքարանի հավանության, այսպիսի հրաժարական մը իրեն անտեղի կերևար, ուստի գործը կհանձներ կաթողիկոսին բարձր և ազատ տնօրինությանը⁵⁹:

Օրմանյան կստիպվեր ուրեմն իր պաշտոնատեղին դառնալ, մանավանդ որ հրահանդ ստացած էր Պատրիարքարանին զեպի Վան մեկնիլ ինչ-ինչ քննությանց համար:

Կաթողիկոսին և Պատրիարքարանի միջև բանակցությունները երկար տևեցին, և իրեն եղած առաջարկեն ճիշտ տարի մը հետո էր միայն, 1887 հունիս 10-ին, որ կաթողիկոսական կոնդակ մը Օրմանյանը կհրավիրեր Ճեմարանի մեջ ուսուցչական պաշտոնի: Հունիս 28-ին Օրմանյան իր հրածարականը կներկայացներ Կարն զավառական ժողովին, որ ցցավով և հուզմամբ» կստիպվեր զայն ընդունիլ, իսկ հուլիս 6-ին վերջնապես կմեկներ Կարինեն, Պոլիս հանդիպելի հետո եղմիածին երթալու համար:

Օրմանյան էջմիածին կհասներ 1887 սեպտեմբեր 3-ին և շորս օր հետո կստանձներ Ճեմարանի աստվածաբանական ճյուղին ուսուցչությունը՝ երեք լսարաններու մեջ օրական շորս ժամով աստիճանաբար բաշխված:

Իր ուսուցչական գործունեության մասին խոսելով, Օրմանյան կըսե. «Աստվածաբանական ուսմանց ընթացքը ծանոթ չէր ուսուցչակից ընկերներու, և առաջին ուսուցչական ժողովին մեջ ինձի հանձնեցին զայն կազմել և ներկայել ընդհանուր ժամանակացուցին: Շաբաթական 24 ժամ զասախուսու-

56 «ԵԽՈՒՅՔ և ԽՈՍՔ», էջ 101:

57 Անդ, էջ 126:

58 «Աղդապատում», Գ, էջ 4579:

59 Անդ, էջ 4581:

թյուն հանձնվեցավ, երեք լսարաններու վրա համեմատարար բաշխելի... Հարկ եղավը ընական աստվածաբանությունը սկսիլ Հոգերանությունն ալ խառնելով, շատագովական ճյուղը լրացնել, և տեսական ու բարոյական աստվածաբանությանց անցնիլ. շարժաթական դաս մըն ալ Ավետարաններու ներածության հատկացվեցավ երեք լսարանները համախմբելով, որոնց շաբաթ երեկոները բարոյախոսություն ալ կկատարեի եկեղեցական և աշակերտական կյանքի նյութերով: Ուսանողներու թիվը 27 էր, որոնցմէ 15-ը առաջին լսարանին ու մնացյալները երկրորդին ու երրորդին մեջք⁶⁰:

Խսկ ուսուցչական իր մեթոդին ակնարկելով, Օրմանյան կրթի. «Դասախոսության գիրք կամ ձեռնարկ չկար, և պետք էր զայն նորեն պատրաստել, որուն համար գրարար լեզուն հարմարագույն տեսնվեցավ, թույլ տալով, որ ևս արևմտյան և ուսանողները արևելյան աշխարհաբար գործածենք դասերը ավանդելու և դարձնելու համար:... Ուսուցչական ձերն համար բնական էր, ոռոգործածեի Հոռմի համարանին հեղինակական և տրամարանական ոճը, որով ևս ալ ուսած էի և որ եթի հանվանդ ալ կըսփի, սակայն մտավորական և տրամարանական զարգացումը կդյուրացնե: Իրոք ալ զգալապես օգտակար եղավ ուսանողներուն մտայնությունը կազմելու, և ուսուցչակիցներու հավանության արժանացավ, և կաթողիկոսն ալ գնահատվեցավ, մասնավոր ունկընդությունց և եռամսյա ու տարհեկան քննությանց առթիվը⁶¹:

Ունիլ այնքան հատկանշական է, քան սա դրվագը, զոր Օրմանյան կպատմե իր ուսուցչության մասին խոսելու ատեն. «Եկեղեցական պաշտամանց ալ ներկա կդտնվեի ցորչափ ուսումնական՝ աշխատությանց և դասախոսությանց արգելք չէին ըլլար: Մեծ պահոց մեջ սաղմոս քաղելու սովորություն կար, և կարգը եպիսկոպոսներն կսկսեր. իմ կարգիս ծաշու սաղմոսին ալ ուզեցի իշնել, դասախոսությունը զանց ընելով, երբ տեսա, որ ձերունի Հարություն եպիսկոպոսը փիլոնը առած կուպար, ու ինձի մոտենալով իմ տեղու զալը հայտնեց, և ծեմարանը ցուցնելով հարեց, «Քու սաղմոսդ այնտեղ է, հոն զնա քաղե: Այստեղ մենք ալ կրնանք քաղեք: Ուսումնական չեղող եպիսկոպոսին այս ուսումնաներ զգացումը այնպիսի քաղցր տպավորություն մը թողած է վրաս, որ այստեղ ալ չուզեցի անհիշատակ անցնիլ»⁶²:

⁶⁰ «Ենոքը և խոսք», էջ 144:

⁶¹ Անդ, էջ 145:

⁶² Անդ, էջ 145—146:

Ուսուցչության այդ կարճ տարին սակայն տվալ իր պտուղը. «Դպրոցական տարին բոլորեցավ կանոնավորապես, մայիսին տարեկան քննություններ կատարվեցան, զի ոչ միայն զասեր ավանդվեցան և կրօնադիտական զարգացում ստացվեցավ, այլև գրավոր ձեռնարկներ պատրաստվեցան և եկեղեցականության մտնելու որոշումներ ստացվեցան: Մակարի գերագույն բաղձանքն էր ծեմարանի ուսումնավարաններն եկեղեցականներ ունենալ, զի մինչև այն օր տակավին ոչ մի ծեմարանի ընթացավարտ եկեղեցականության հանձնառու եղած չէր: Այդ նպատակն ալ Օրմանյանի հանձնվեցավ, որ հաջողեցավ 1888 հունիս 15-ին տեսուշ նահապետացանը և ծեմարանի ընթացավարտներն չորսը կաթողիկոսին ներկայի ուսումնականության հայտնելու և օրհնությունը ընդունելու երրոր այսպիս գործը հաջողությամբ կհառաջնը, հանկարծական պարագա մը զայն հիմնովին խանգարեց»⁶³:

Օրմանյան շատ հարեւանցի անցած է իր գրությանց մեջ, ինչպես ծեմարանի իր գործունեության, նույնպես և անկե հեռացվելու պարագաներուն մասին: Իր գործունեության մասին գոհացած է ընդհանուր ակնարկներով, իսկ իր հեռացման դադանի ծալքերը կերպի թե լրիվ հայտնի չեն եղած իրեն:

Դավ մը կար, և այդ զավկը կպատրաստվեր ամիսներե ի վեր, առանց օր Օրմանյան լուր ունենար այդ մասին: Երբ ան հունիս 15-ին առաջին ընծայացուները կներկայացներ կաթողիկոսին հոգիկան բացառիկ գոհունակության մը անձնատուր, իր ճակատագիրը վճռված էր արդեն մութին մեջ, որոշված էր իր հեռացումը:

Օրմանյանը ծեմարաններ հեռացնելու օրինական շարժառափթը պատրաստ էր ցարական իշխանությանց համար,— ուսումնապատակ չէր Օրմանյան: Իրականին մեջ պատրավակ մըն էր միայն այդ: Օրմանյաննեն առաջ ոչ-ուսումնապատակներ գտնված էին արդեն ծեմարանի ուսուցչական կազմին մեջ, ինչպես օր պիտի ըլլարին հետագային ալ:

Վերջերս կենինքրադի Պետական կենտրոնական արխիվի № 821 ֆոնդի մեջ հայտնաբերված կարգ մը փաստաթուղթեր⁶⁴ բավարար լույս կսփռեն այն պարագաներուն մասին, որոնց մեջ Օրմանյան հեռացվեցավ

⁶³ «Ազգապատում», Գ, էջ 4581:

⁶⁴ Տե՛ս Վահան արեղա Գալամդարյանի «Մաղարիա արքեպիսկոպոս Օրմանյանը Գեորգյան ճեմարանի աստվածաբանության զասափոս» խորապես հոդվածը, «Եղմածիան», 1956, Ա 6, էջ 42—52:

Ճեմարաննեն և որոնք հարեւանցի միայն շուշափված են Օրմանյանի կողմէ:

Օրմանյան էջմիածնեն կմեկներ հետք մը ձգելով: Իր մեկ տարին Գևորգյան ճեմարանի մեջ բավական էր եղեր, որ նոր շունչ մը մտնե հոն:

Մեկ տարին ակնթարթ մըն է լոկ հանրային մարդու մը կյանքին մեջ, բայց ան երթեմն բացառիկ հետք կծիք:

Օրմանյանի համար այդ մեկ հատիկ տարին բավ եղավ, որ նոր մինչորդ մը ստեղծվի Ճեմարանին մեջ:

Էջմիածնի մեջ իր ցանած սերմերուն մասին խոսելով, Օրմանյան կրու. «Էջմիածնի մեջ յուր ցանած կրոնագիտական և եկեղեցարական սերմերը տակալ աճեցան, Ճեմարանի ծրագրին մեջ հաստատվեցան աստվածաբանական ուսումները, Օրմանյանի ներկայած հինգ ընծայցուներն թեպետ երեքը պարագաներն վշտանալով ետք բաշվեցան, բայց Արշակ Նահապետյան տեսուչ և Կարապետ Տեր-Մկրտչյան ընթացվարտ Ճեմարանություն ստացան, և բավական հետևողներ ունեցան մյուս լսարաններն և դասարաններն, որոնք Գերմանիո համալսարանաց մեջ ալ կատարելագործվեցան, և Ճեմարանական ընթացավարտ վարդապետներու ընտիր խումբ մը կազմվեցավ Մայր Աթոռու մեջ»⁶⁵:

(Չենք գիտեր, թե ինչո՞ւ Օրմանյան մոռցած է հիշել Արշակ Նահապետյանի և Կարապետ Տեր-Մկրտչյանի կողքին նաև Գարեգին Հովհանիսիանն ու Գևորգ Գորեթյանը,

որոնք նույնպես հոգեւոր կոչման դիմած են նույն այդ օրերուն):

Խոսելով այն օրերուն մասին, երբ Օրմանյանի իսկ ներշնչման տակ ինք և Ճեմարանի տեսուչ Արշակ Նահապետյանը որոշեցին հոգեւորական ասպարեզն ընդգրկել, Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան, Օրմանյանի անդրանիկ Ճեմարանուներ, կորե նամակի մը մեջ «Ելապես թե այնպես մենք բարոյական մեծ պարտականություն զգացինք այսպես վարվելու, և մի բանի շաբաթ շարունակ գտնըվում էինք ոգեստության ու երիտասարդական վառ երևակայությունների մի այնպիսի շամանդաղի մեջ, որին մատչելի չէ ոչ մի հաշիվ, ոչ մի կողմնակի մտածում: Հարկավ մեղ հետ ոգեստոված էին ու շատ ուրախացած մեր տեսուչը (Ա. Նահապետյան), մեր ուսուցիչները, երջանկահիշատակ Հայրապետը. ամեն երեկո Օրմանյան սրբազնի շուրջը բոլորած՝ ծրագրներ էինք կազմում ապագայի համար, թե ինչպես պետք է շարունակենք եկեղեցական ու հայագիտական ուսումնասիրություններ, ինչպես պետք է մի նոր միաբանության սկիզբը դնենք»⁶⁶:

Օրմանյանի շունչը կրեցին նաև անոնք, որ երբեք ալ իրեն շաշակերտեցան ուղղակի:

Օրմանյանի Ճեմարան գտնված տարիներուն դեռ պատանիներն էին շատերը այն հոգեւորականներն, որոնք հետագային դեմք պիտի դառնալին հայ կյանքի մեջ և որոնք Օրմանյանի աշակերտները պիտի սեպեին իրենք պիտինք:

6. ԿԵԴՐՈՆԱԿԱՆԻ ԹԵՄԵՆ

Կեդրոնականը Օրմանյան ինքն իսկ կդասե հաճախ այն բեմերու կարգին, ուրկե խոսած է նոր սերունդին: Երբ 1889-ին ուսուցչական պաշտոնի կողմէի Օրմանյան կեդրոնականի մեջ, հազիվ Յ տարիե ի վեր բացված էր դպրոցը, բայց արդեն սկսած էր իր վրա սեղուած պահել հանրության համակրանքն ու հոյսերը: Ազգը անկե բացառիկ սերունդ մը կսպասեր, ու հանձնառու եղեր էր բացառիկ ալ զոհողությանց: Նախ Մինաս Գերազի և հետո Հարություն Մոստիլ-

յանի տեսչության ներքեւ դասախոսներու ընտիր խումբ մի պաշտոնի կոչված էր հոն:

Անոնց վրա շուտով կավելնար Օրմանյան ալ, ավանդելու համար կրոնագիտության դասը, որ միշտ եղած է պարունակություն հայ կյանքի մեջ և որոնք Օրմանյանի աշակերտները պիտի սեպեին իրենք պիտինք:

Կարճառե եղավ սակայն Օրմանյանի պաշտոնավարությունը Կեդրոնականի մեջ: Արմաշը անկե խլեց զայն:

7. ԱՐՄԱՇ ԵՎ ԻՐ ԳԱՍՏԻԱՐԱԿԻ

Արմաշի դպրեվանքի վերատեսչությունը Օրմանյանի փառքի տիտղոսն է. — յոթը տարրիներու խաղաղ շրջան մը աղմուկով լեցուն կյանքի մը մեջ:

Երբ 1888 սեպտեմբերի 29-ին Կոստանդնուպոլսու պատրիարք կրնարվեր Խորեն Աշլի-

յան, հազիվ ամիսե մը ի վեր Պոլիս դարձած էր Օրմանյան էջմիածնեն, և ինքն ալ հրավիրված էր եպիսկոպոսներու այն հավաքութին, զոր գումարեց նորընտիր պատ-

⁶⁵ «Աղքաղատում», Գ. էջ 4582.

⁶⁶ Երվանդ Տեր-Միհեայան, «Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյան», Մոսկվա, 1911, էջ 7-8:

րիարքը հոկտեմբերի 27-ին, պաշտոնի ձեռնարկելե ութը օր հետո:

Եղբայան, որ Արմաշի իր վանահայրության օրերեն միտք շարշարած էր հայ եկեղեցականության բարեկարգման համար, ժողովին պարզեց իր ծրագիրը՝ առաջին հերթին առաջնորդներով օժանելու համար գավառական թափուր թեմերը: Այդ առթիվ երկու առաջարկ կներկայացներ ան: Նախ դադրեցնել առաջնորդներու ընտրությունը գավառական ժողովներու միջոցով ուղղակի կերպունքն անվանելու համար զանոնք, և երկրորդ առաջնորդներուն թոշակ ապահովել պետության գանձեն:

«Կարծիքներ սկսան հայտնվիլ,— կրթի Օրմանյան.— ումանք վերապահությամբ, ուրիշներ ակնածանոթ, այլք դարձալ տարտամ միտքով ուժին ընդդմություն ցուց չէին տար, որով Հարկադրվեցա ներհակ կարծիքի պաշտպան կանգնիլ, բացատրելով այդ միջոցների հառաջ գալիք անպատճությունները: Այդ կարգին հայտնեցի ալ, որ ավանդական կամ ժողովրդական ընտրության համար Հռոմի դիմ ալ մաքառիկ ետքը, չէի կրնար Հայ եկեղեցվոր շրջանակին մեջ անոր շնչվելուն հավանիլ:

Պատրիարքին ախորդ չեկավ իմ բացարձակ ընդդմությունը, մեծամասնությունը կերեկ պատշաճ շգտած նորընտիրին բնդդիմանալ և ես Կեդրոնական վարժարանին մեջ դասախոսությունս պատճառելով մեկնեցա: Երեկոյին ականջս հասավ, որ մեկնելս ետք շատ մը անձնականության խոսքեր ըրեր է Եղբայան իմ մասին, և գործին սկզբունքի տարեր կերպարաններ են տրվեր: Ուզեցի ուղղակի իրեն դիմել և բացատրություն պահանջել: բարեկամներ ումանք հակառակը կթելադրեին, բայց քանի մի օր ետքը որոշումս գործադրեցից⁶⁷:

Օրմանյանի տեսակետը հաղթեց: Հայ եկեղեցը բարեկարգության ձեռնարկելե առաջ, անհրաժեշտ էր նախ զարգացած հոգևորականություն մը պատրաստել: Եվ այդ հոգևորականությունը չէր կրնար հասուննալ գոյություն ունեցող պայմաններուն մեջ:

Պահ մը մտածվացավ Պոլսո մեջ բանալ ապագա դպրեվանքը: Պոլսի թե՛ իր առավելությունները և թե՛ անպատճենություններն ուներ հոգեր պատրաստության կերպոն մը հանդիսանալու համար: Ի վերջո որոշեցին հոգեր այդ կեդրոնը բանալ քաղաքի ժմուռին հետո, և Արմաշի վանքը միակ հարմարն էր դառնալու համար այդպիսին: Ոչ միայն Պոլս մոտիկ էր ան, և հետեարար ավելի

հարմար անմիջական հոգածության, այլև դարավոր վանք մը կար հոն, հողակված իրեկ ուխտատեղի, և մանավանդ փորձեր եղած էին ադկի առաջ ալ հոգենոր ուսումնարան մը պահելու հոն: Եվ վերջապես Արմաշի մեջ դպրեվանք մը պատրիարքին անձնափոխումն ալ պիտի շոյեր, որովհետեւ Եղբայան Արմաշի վանահայրութենեն եկած էր Պատրիարքական Աթոռոր, և վանահայրության այդ տիտղոսու միշտ պիտի պահեր՝ շարունակելով հովանավորը մնալ նոր դպրեվանքին:

Դպրեվանքը դժվար թե իրականանար սահայն, եթե անոր սատար չկանգներ Արիկ Ունցյանը, բացառիկ գեմքերեն մեկը հայ ունեռոր գասուն մեջ, որ հանրային բազմաթիվ ձեռնարկներու զորավիգ եղած էր և զեռ կշարունակեր ըլլալ: Դեր էր կատարած հանրային շատ գործերու մեջ, ու հիմա կաշակցեր Արմաշի ստեղծման:

Վանքերու գերը հայ կանքին մեջ նոր չէր:

«Եթե պատմական իրողություն մը կնըկատվի հիննեն ի վեր վանքերու օգտակարությունը մեր մեջ, ապահովաբար այն հաստատություններով չէ, որոնց մեջ ապրելի ավելի շնչած են միայն վանականներ և ճրգնավորներ, շունենալով որևէ գերիվերու նպատակ ծառայելու ազգին կամ հայ հանրության պետքերուն, այլ անոնցմով որ իրեն լուսավորության վառարաններ կանգնած՝ միշին և նոր դարերու ընթացքին՝ կրցած են նշունել հայության համատարած մարմնին զանազան մասերուն վրա, փոքրիշատե փառատելով դժբախտ ժամանակներու մեջ բրոնթյան ու ավերներու՝ արյունի ու հալածանքներու երեսեն թանձրացող խավարը:

Դպրեվանքերը՝ զարգացումի այդ կենանի փեթակներն էին, որ դպրերով կատարեցին մեր մեջ իրենց դառն աշխատությունները, ոփուզ ու տատասկա բուացնող երկրի մը սարերեն ու ձորերեն հազիվ գտնելով իրենց մեղրին պատրաստության ծաղիկը: Եվ երբ ուինչ մնացած էր արդեն ինչպես զյուրին է տեսնել՝ հին քաղաքական գործունեության մը անհուն զոհողություններին, երբ ամեն զենք փշրված էր հայ ձեռքերու մեջ, գոնե չշախազախվեցավ վանական մատներու տակ գողզողով այն զրիշը՝ որ պիտի երաշխավոր մասամբ անդրագույն կյանքի մը պահանումը»⁶⁸:

Արմաշի վանքը մուա երեք դպրերու կյանք մը ապրած էր արդեն, երբ դպրեվանքը կուպար բացվիլ իր հովանիին տակ: Ան հիմնված էր ԺԲ դարու առաջին տասնամյակին և որոշ շրջաններու կրթական օջախ էր դպրածած:

⁶⁷ Մաղարիա արմեափակուս Օրմանյան, «Առաջին գաղափարը», «Արմաշու Դպրեվանքին 25-ամյա հոկտեմբերին առթիվ», Կոլիմ, 1914, էջ 142:

Արմաշը պատմության անցավ սակայն այն օրեն, երբ Օրմանյան ոտք կդներ հոն: 1889 սեպտեմբեր 18-ին էր այդ:

Արմաշը գործունելության լայն դաշտ մը կրանար Օրմանյանի առջև:

Օրմանյան կմտներ իր բուն կոչման մեջ, որուն բաղձացեր էր այնքան տարիներե ի վեր: Ճեմարանի իր մեկ տարին, և ուսուցչական ամբողջության կերպոնականի մեջ, միշանկալ օվասիսներ եղել էին իրեն համար իր աղմկալից կյանքի ընթացքին: Հիմա արդեն իր ասպարեզին մեջ էր լրիվ: Ճեմարանի թե Արմաշի մեջ՝ Օրմանյանի գլխավոր նպատակնեղավ հասցնել հոգևորականներու նոր սերունդ մը:

Պետք է սկսել, որ Աշրգիւանի ներկայությունը Պատրիարքական Աթոռի վրա անհունապես դյուրացուց Օրմանյանի ստանձնած այդ առաքելությունը:

Օրմանյան մինակ էր առաջին տարին իր առաքելության մեջ, որից աջակից շուներ, բայց եթե տեղական համեստ ուժերը: Արդեն ուսանելու եկած պատահիներու թիվն ալ համեստ էր առաջին տարին:

Երկրորդ տարին է միայն, որ Արմաշ կմտնե իր բուն գերին մեջ: Օրմանյանի աջակից կուգար Եղիշե Դուրյան երիտասարդ վարդապետը, որուն ուսուցչության տասը տարիները Պարտիզակի մեջ բացառիկ հմայք ստեղծեր էին անոր անվան շուրջ: Ամբողջ վեց տարի անոնք գործակցեցան իրարու, Օրմանյան իրը փոխ-վանաճայր և վերատեսուց, իսկ Դուրյան իրը տեսուց, գործակցություն, որ Հայ Եկեղեցի կյանքին մեջ կենսունակ օվասիս մը պիտի բանար և որ հավանաբար դեռ շարունակվեր երկար, եթե դեպքերը Օրմանյանը Արմաշեն շիսեին և շտանեին Պուրու Պատրիարքական Աթոռը, իր առաջին ճեռնասունները հազիվ ընծայած Ազգին:

Օրմանյանի յոթր տարիները Արմաշի մեջ անոր կյանքին ամենեն բեղմնավոր տարիներն եղան:

Արմաշը Արմաշ պիտի շըլլար անշուշտ առանց Դուրյանի, ան էր, որ վերջնական հմայքը տվալ Դպրելավանքին, ավելիքան տասներեք տարի տքնելով անոր պատերուն մեջ և հասցնելով զայն տակավ իր բուն կոշման: Բայց առանց Օրմանյանի Արմաշը բնավ պիտի շըլլար, և պիտի շտառնար ի վերջու այդ օվասիսը:

Խառնվածքով ու նկարագրով, պատրաստությամբ ու նախասիրություններով տարրեր էին Արմաշի երկու դաստիարակները, բայց սերունդը, որ հասունցավ իրենց ճեռքին տակ, հավասարապես երկութիւն ալ է, որովհետեւ երկութիւն ալ հետք մը մնաց իր ներսը:

Երկու մեծ հոգևորականներուն զուգակշիռ ըրեր ենք այլուր. այդ առթիվ մեր ըսածները պիտի չկրկնենք: Բայց Օրմանյանի գերը ճշտելու առթիվ Դպրելավանքին մեջ, որ երկութիւն ալ ձեռակերտն էր հավասարապես, կարելի չէր չակնարկել նաև Դուրյանի դերին: Տարբեր-տարբեր դերեր ունեցեր էին անոնք արդարեւ Դպրելավանքին մեջ: Ճիշտ է, տարբեր էին եղեր իրենց ավանդած նյութերը. բայց տարբեր էր եղեր նաև իրենց ուսուցման ձեզ, — նյութին մոտենալու իրենց կերպը և զայն վերլուծելու իրենց եղանակները: Եվ այս արդեն կմղվինք զանոնք բաղդատելու իրենց Դպրելավանքի գործունեության մեջ, — նոր զուգակշիռ մը երկու մեծ հոգևորականներուն միշեւ:

Երկութն ալ գիտական միտքեր էին, և գիտական գրում տվին երկութն ալ իրենց դասախոսությանց: Երկութիւն այլ ձգտումն էր որոնելու և վերլուծելու կիրքը մտցնել իրենց սաներուն մեջ: Բայց տարբեր էին իրենց ուսուցման ոճերը:

Դուրյան վերեն կնայեր ինքը աշխարհի բաներուն վրա, և այդպես կներշնչեր իր սաներուն ալ. վերեն զննել դեպքերը, — այդ էր իր ոճը. ու վերեն զատել զանոնք պակելի ճշշգրիտ դատելու համար: Օրմանյան, ընդհակառակը, կմիմբճկեր իրերուն խորը, կթափառեր ամեն խորշ, և զանց չէր ըներ որևէ մանրամասնություն: Դուրյան քեզ կմղեր, որ ուղեղդ դուն ալ շարշարես ու դուն ինքդ հանգիս եղրակացության: Օրմանյան ինքը կհանգիս եղրակացության, և քեզ ալ կներշնչեր զայն:

Երկութն ալ անշուշտ ունեին իրենց վերապահումները տեսությանց մասին, զորս ավանդությունները բերեր հասցուցեր էին իրենց: Դուրյան երկութ էր վճռական խոսք ըսկու համար. ան բառերու և դարձվածքներու մեջ կսողեր իր կասկածներն ու տատամսումները, Օրմանյան ավելի հանգուզն էր, և իր մտածումը կըսեր համարձակ, որքան անշուշտ թուզ կուտար իրեն սքեմը:

Օրմանյան մեթոդի մարդն էր. ինչպես իր ամբողջ կյանքին, նույնպես և Արմաշի մեջ աշխատելու իր ուրույն սիստեմը ուներ իր գիտական մեթոդը: Այդ մեթոդին կպարտի պաշարը, զոր ամբարած էր և իր թողած երկրուն դեզը:

Բարգեն կաթողիկոս, Արմաշի անդրանիկ ձեռնասունը, երկու դաստիարակներուն զուգակշիռ ըրեր ընելով կըսե. «Երկութիւն ալ քննադատ. Օրմանյան՝ զորավոր կրոնական և աստվածաբանական մարդին մեջ՝ կառաջնորդեր մեզ քննական ոգիով. Դուրյան ինքնատիպ ուժականությամբ մը կօժտեր իր

քննադատությունը պատմական և մատենագրական մարզին մեջ»⁶⁹:

«Դաստիարակության մեջ լոին էր իր մերությունը. իր կյանքին ու կենցաղին օրինակը միայն կուտար, և այս կողմեն բոլորովին հակապատկերն էր Օրմանյանին, որ կարեր խոսիլ իր աշակերտներուն հետ զատ-զատ և կենդանի խոսքին թովքով կերտել անոնց նկարագիրը: Օրմանյան կխոսեր ու կգրեր միշտ. Դուրյան կկարդար միշտ ու կլոեր»⁷⁰:

Արմաշը, կամ ինչպես կկոչեր ան ինքվինը՝ Դպրեվանքը, ի դերև շհանեց իր վրա դրված հույսերու:

Ինչ որ էջմիածնի մեջ փորձեց սկսիլ, Արմաշի մեջ էր որ իրականացուց Օրմանյան, Ավելի ճիշտ՝ Հոն շարունակեց ինչ որ սկսած էր այստեղի Տարրեր էին երկու միջավայրերը և պայմանները, որոնց մեջ ստիպված էր գործել, բայց մեկ էր հիմնական մտահոգությունը՝ Հայ Հոգևորականներու զարգացած կազմ մը պատրաստել: Հոն որոշ պատրաստությամբ երիտասարդներու խումբ մը հանձնված է իր հոգածության, ու հազիվ տարի մը ունեցած էր կաղապարելու համար զանոնք, բայց այդ մեկ տարին բավական էր եղած նոր շունչ մը մտցնելու Ճեմարանեն ներս: Այստեղ գոլորովին տարրեր էր արդեն պարագան. պատանիներ էին, որ կուգային իր խնամքին տակ, ու ինքն էր, որ ձև պիտի տար անոնց: Ինքն էր, որ զանոնք պիտի կերտեր ամբողջապես: Սերունդը իրը պիտի սեպվեր լրիվ:

Օրմանյան նոր դպրոց մը ստեղծեց Հայ եկեղեցվո ժողին մեջ:

Օրմանյանի Արմաշի գործունեությունը ուրվագծած ատեն կարելի չէ շծանրանալ նաև անոր հիմնական մտահոգության վրա,— իր սաներուն մեջ զնել որոնելու, տքնելու և ստեղծելու կիրքը: Բավական չէր զարգացած սպասավորներ պատրաստել Հայ Եկեղեցիին և զանոնք հանձնել Հայ ժողովուրդին. անհրաժեշտ էր մտքի և գրչի մարդն ալ թրծել անոնցմե ամեն մեկուն մեջ, որպեսզի իրենք իսկ կարենան լուսամուտ բանալ իրենց. միարձման անցյալին մեջ ու զայն զննել կարենային, սիրով հսկեին գրեթերու և թուղթերու դեղերուն վրա ու տքնելե համ

առնեին, հաջողեին թուղթերուն լեզու տալ, լուծեին առեղծվածները:

Վարդապետական թեզերը, զորս ներկայացուցին Օրմանյանի և Դուրյանի հավաքական շունչին տակ հասունցած առաջին իրեք դասարանները, ապացուցն են ինքնին այն հիմնական նախանձախնդրության, զոր անոնց ներսը թրծեցին զուգ դաստիարակները: Բավական է այդ թեզերուն ցանկը տեսնել, որպեսզի մարդ տեսնե ոգին ու թափը նույնիսկ այդ առաջին խարխափումներուն մեջ:

Նույն այդ մտահոգությամբ է, որ Օրմանյան պետք տեսավ կրոնական օրգան մը ևս ունենալ Դպրեվանքի կողքին: Ան պիտի ծառայեր մասնավորպես ասպարեզ տալու Դպրեվանքի մեջ հասած նոր ուժերուն, որպեսզի անոր բեմեն իսկ իրենց միտքը մարզեն: «Մասիս», որ այդ առաջադրությամբ լուս էր տեսեր 1895-ին, տարվան մը կյանք հազիվ ունեցավ: Փոթորիկը զայն ալ խեղդեր էր իր առաջին մարզանքներուն մեջ:

Օրմանյան իր աշակերտներուն մեջ ոչ միայն գրքերու վրա ուղեղ հոգնեցնելու և իրենց մտքի հորիզոնը ընդլայնելու կիրքը դրավ, այլ նաև իսկույն զործի ասպարեզ մտնելու տեսնը: Իր սաներուն մեծ մասը, հազիվ վեղարը անցուցած գլխուն, զավառ փութաց առանց երկար համենալու Պոլսո ծիծողուն ափերուն վրա: Իր սաները բախտավոր եղան, որ իրենց ուսուցիչը Պատրիարքական Աթոռոր եկավ և դյուրացուց իրենց մուտքը գործի ասպարեզ: Նույն բախտը պիտի ունենային Դուրյանի և Գուշակյանի հասցուցած սերունդներն ալ, որոնք նույնպես ոգերգված էին իսկույն գործի անցնելու իդավու:

Երկու դաստիարակներու հավաքական խնամքին տակ ուոճացած կուսակրոն հոգեվորականներու թիվը ճիշտ է, որ 13-ը շանշավ,— 7-ը՝ առաջին վարդապետները, որոնք 1895-ին ավարտեր էին, 5-ը՝ հաջորդ տարին սրեմ առնողները, և վերջինը, որ միակն եղավ իր դասարաններ հոգևոր ասպարեզը մտնող, ձեռնադրված 1897-ին: Բայց երիտասարդ հոգևորականներու այս փոքր թիվն էր, որ իր դաստիարակներուն գործը շարունակեց կյանքի մեջ: Ոմանք Արմաշը իրենք վարեցին հետագային՝ շարունակելով իրենք ևս իրենց կարգին սերունդ հասցնել, ուրիշներ՝ զավառական պաշտոններու վաղեցին հայ ժողովուրդին հոգերուն հետ նույ-

⁶⁹ «Մշակն ու իր վարձը», Երաւաղեմ, 1931, էջ 66:

⁷⁰ Անդ:

նանալու, և եղան ալ, որ նվիրապետական բարձրագույն Աթոռութեառուն հասան իրը կամողիկոս կամ պատրիարք պատմության անցնելով Արմաշի անունը:

Սիալ պիտի ըլլար Արմաշի գերը սահմանափակել իր հասցուցած վարդապետներու հունձքով: Փոքր եղավ նաև թիվը այն արմաշականներուն, որոնք մեկնեցան առանց սքեմ առնելու, և որոնք կոչված էին սակայն գեր ստանձնելու հայ հանրային կյանքի մեջ: Զույգ դաստիարակներու ձեռքին տակ պատրաստված այդ տարրերեն ոչ միայն պատրաստված այդ տարրերեն ոչ միայն հետագային, այլև կարեւահանաներ ելան հետագային, այլև կարեւափոր թիվ մը մտավորականներու, որոնք աշքառու եղան հետո ուսուցչական և գրական ասպարեզներու վրա, և որոնք Արմաշին ու իր զույգ դաստիարակներուն բան մը կպարտին:

Այնքան խոր էր եղած Օրմանյանի ստեղծած հմայքը կարնո իր ասաշնորդության և ձեմարանի իր ուսուցչության հետ կապված զեպքերու հետևանքով, որ լայն խավերու բացառիկ համակրանքը շահած էր արդեն, երբ Արմաշ կղրկվեր Դպրեվանքը ստեղծելու, Արմաշը ավելի ևս խորացուց այդ հմայքը գալոց օրերու համար:

Իզուր չեր: որ Գրիգոր Զոհրապ, Օրմանյանը մտցնելու առթիվ իր «Ծանոթ գեմքեր»-ու շարքին մեջ, կգրեր. «Այս եկեղեցականը մեր եպիսկոպոսներուն երիտասարդն է՝ ին, որ մեծ բան է հարկավ, և մեր երիտասարդներուն եպիսկոպոսն է, ինչ որ ավելի մեծ բան մըն է»:

Արմաշը հաճելի չեր հոգմորականներին որոշ դասի մը: Կարիք չէին զգար անոնք զարգացած եկեղեցականության մը. ոմանք կշղայնանային իսկ Արմաշի անունը լսելնուն: Այնպես որ անոնց հրճվանքը շափ շուներ, երբ 1896-ի ամառը լուր եղավ հանկարծ, թե փակվելու վրա էր Արմաշը: Այդ այն պահում էր, երբ երուսաղեմ աքսորի զրկված էր հզմիրլան, և իր տեղը բերված թարթողիմեռու եպիսկոպոս Զամիլյանը՝ Համբիդի ամենեն զերմ իննկարկուն. այդ օրերուն էր դարձլաւ, որ բանտ նետված էր Դպրեվանքի սատարը՝ Արիկ Ումեյան և չէր արձակված գեռ: Խնչպես կպատմե Օրմանյան, Բարթողիմեռու և իր գործակիցը նուրբան ըսեր էին դիվային հրճվանքով մը, թե Դպրեվանքին «Հոգուց»-ն ըսված է:

Խնչպես պիտի տեսնենք, շատ կարճ տևեց անոնց հրճվանքը:

Երջան մը ևս կփակվի Օրմանյանի կյանքին մեջ, տասնյոթը տարիներու երկար շրջան մը հայ ժողովուրդի ծոցեն ներս: Օրմանյանի կյանքին ամենեն առուցդ տարիներն եղան անոնք, և միևնույն ատեն ամենեն բեղմնավորները: Այդ շրջանին էր, որ Օրմանյան արդարացուց իր դարձը դեպի իր ժողովուրդին ծոցը, մաս առնել անոր հոգերուն ու ճիգերուն մեջ, երթալ քրտինք թափելով Հայրենի հողին վրա, մինչ ուրիշներ կդժկամակեին հեռանալ Վոսփորի հմայիշ եղերքներեն: Ան արդարացուց նաև իր դարձը Հայ Եկեղեցինեն ներս, իր գիտության ամբողջ պաշարը ի սպաս դնելով հոգեւորական նոր սերունդի մը ստեղծման համար:

Այս շրջանը ուրեմն կխորհրդանշե մեկ կողմէ Օրմանյանի անձնվեր թափը նույնանալու հայ ժողովուրդի ցանկության հետ և իր կյանքը նվիրելու անոնց իրագործման համար, և միևնույն ատեն անոր հիմնական առաքելությունը, զոր պահ մը ձեմարանի մեջ սկսած, պիտի գար Արմաշի մեջ իրագործելու:

Հանդարտ խղճմտանքով և առանց հոգեկան դառնության չէ, որ կրաժնվեր Օրմանյան իր իսկական կոշումեն, որուն պարզ սկզբնավորությունը միայն եղեր էին Դպրեվանքի իր յոթը տարիները և զոր կերազեր շարունակել զեռ երկար: Ան հպարտ էր Արմաշի առաջին բերքով, որ կուգար թարմություն բերել Հայ Եկեղեցինեն ներս, և որ գոհունակություն ստեղծեր էր հայ ժողովուրդի բոլոր խավերուն մեջ, բացի հայ ժողովուրդի հոգիին և Հայ Եկեղեցվո ավանդությանց խորթ քիթք մը, որուն աշքերուն փուշ էր Արմաշը և որ Ազգին զեկը ձեռք առած իջմիրլանի տապալումեն վերջ, իր առաջին գործն էր ըսեր Դպրեվանքին «Հոգուց»-ն արտասանելու:

Օրմանյան տամուկ աշքերով կրաժնվեր Արշամեն Դուրյան Եղիշե վարդապետին հետ, որ իր շանքերն էր կիսեր Դպրեվանքի մեջ, և կփակեր այս կերպով իր կյանքին ամենեն քաղցր շրջանը:

(Շարունակելի)